

ԿԱՐԼ ՄԱՐԺՍԸ ԵՒ ՄԱՐԺՍԻԶՍԸ *)

I

Մարքսի կեանքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ զբաղման վաստակները:

Segui il tuo corso e lascia dir
le genti!

Հետեիր ճանապարհիդ, և թող
մարդիկ խօսեն, ինչ ուզում են:
Դւնիստ.

3.

Մարքսի պատիւ և ակտիւ աշխատանքները:—Նրա հրապարակախօսական գործունէութիւնը:—Նա սուր քննադատում է Գերմանիայի բուրժուազիայի և կառավարութեան, ապա դրանց և պրոլետարիատի փոխադարձ յարաբերութիւնները:—Մարքս-էնգելսի քաղաքական սկզբունքի այժմէական նշանակութիւնը:—Ժողովուրդը և թագաւորը:—Մարքս-էնգելսի բանակութիւնը քաղաքական բաղիկալիզմի դէմ:—Գերմ. բանուորների խումբը և դեմօկրատական ընկերութիւնը Բրիտանիոյ մէջ:—Մարքսի դասախօսութիւնը՝ «Վարձու աշխատանք և կապիտալ»:—Նրա մի այլ դասախօսութիւնը՝ «Ազատ առևտրի մասին»:

Խիստ բեղմնաւոր ընթացք է ունենում Մարքսի մի քանի տարիների կարճ ժամանակամիջոցը, որ նա անցրել է Բրիտանիոյ մէջ, իր մտերիմ ընկերոջ՝ Էնգելսի հետ միասին: Մարքսի երկու կարգի զբաղմունքները,—որոնք թէև միմեանցից տարբերում էին, բայց մէկը միևսին օժանդակում էր,—քանի դընում, այնքան ծաւալում և ինտենզիւ չափեր են ընդունում: Նա անընդհատ շարունակում է իր մասնագիտական պարապմունքները—անդուլ եռանդով ուսումնասիրում պատմութիւն, փիլիսոփայութիւն, տնտեսագիտութիւն և սոցիալիզմ: Դա նրա պատիւնը (կրաւորական) աշխատանքն էր: Սակայն միևս կողմից աճում

*) Տես «Մուրճ» № 1

և բազմակողմանի է դառնում նրա սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական և գրական-գիտական գործունեությունը։ Դա էլ նրա ակտիվ (դրական) աշխատանքն էր։ Երկուսը միասին—պատիւ ու ակտիվ աշխատանքները Կարլ Մարքսի—առաջ էին ընթանում անշեղ ու զուգահեռաբար։ Առաջին միջոցով նա ընդունում էր, պատրաստում հիմնապէս, իսկ երկրորդ միջոցով, նա արտադրում էր եւ պատրաստում, կազմակերպում մեծ խնամքով այն դասակարգի համար, որի ազատագրութեան գործին Մարքսը նուիրեց իր ամբողջ անհատական կեանքն ու հասարակական գործունեությունը։

Մենք արդէն ծանօթացանք նախորդ գլխում Մարքսի Բրիւսելում անցրած կեանքի ու գործունեութեան սկզբնական շրջանի հետ։ Մարքսի, ինչպէս և Էնգելսի հրապարակախօսական գործունեությունը տեղական օրգանի («Deutsche Brüsseler Zeitung») մէջ, նրանց կարգացած դասախօսությունները գերմանական բանուորական խմբի և դեմոկրատական ընկերութեան ժողովներում, վերջապէս այն ահագին ծառայությունը, որ նրանք արել են այսպէս անուանուած՝ «Արդարների դաշնակցութեան» («Der Bund der Gerechten») համար,—այդ բոլորը պատկառելի տեղ են բռնում Մարքս-Էնգելսի 40-ական թուականներին ունեցած ընդհանուր գործունեութեան մէջ։

Մարքսի աշխատակցությունը «Deutsche Brüsseler Zeitung» օրգանում (հրատարակութեամբ մի պրուսական էմիգրանտ սպայի՝ Ադալբերտ Ֆոն Բորնշտեդ անունով), սկսած 1847 թ. սկզբներից, շուտով այն հռչակը տուաւ այդ թերթին, որ նա դարձաւ երրորդ յայտնի դեմոկրատական թերթը ամբողջ Եւրոպայում և դասուեց «Northern Star» (չարտիստների օրգանը Անգլիայում) և «Réformée» (ֆրանսիական դեմոկրատների օրգանը Փարիզում) թերթերի շարքը։

Մարքսը մի շարք յօդուածներով, յաճախ պոլեմիկական բնուորութեամբ, քննադատում է ժամանակակից Գերմանիայի քաղաքական վիճակը, շօշափելով բուրժուազիայի եւ կառավարութեան, դրանց երկուսի և պրոլետարիատի փոխադարձ յարաբերությունները, ու այն ժամանակուայ յեղափոխութեան բնուորությունը։ Մարքսը սուր իրոնիայով ծաղրում է մի շարք սոցիալիստ-ուտոպիստների (ա ի Կարլ Գրին, Հայնցեն և ուրիշները) իլլւզիաները, որոնք չեն հասկանում այն պատմական անհրաժեշտությունը, որ ռաւոնուր դասակարգը պէտք է իր սեփական շահերի տեսակէտից նախ ապահովէ բուրժուազիայի յաղթանակը աբսոլյուտիզմի և ֆէօդալիզմի դէմ։ Միւս կողմից Մարքսը նոյնքան սուր ու խայթող գրչով քննա-

դատում է գերմանական բուրժուազիային, որի դասակարգային քաղաքականութիւնը կրելով յեղափոխական անունը, նստացել է արդէն իսկ ընկերային տակտիկայի բնաւորութիւն։ Նա (բուրժուազիան) թոյլ ու անդիմադիր էր թագաւորութեան և իւնկերական տարրի հանդէպ և չկարողացաւ հարկաւոր չափերով օգտուել բանուորութեան արմատական ոյժերից։

Մարքսն ու Էնգելսը յիշեալ թերթի մէջ մի փայլուն յօդուածով (12 սեպտեմբերի 1847 թ.) ջրում են քաղաքական ուղիկալիների և ուտոպիստ-սոցիալիստների այն նայիւ կարծիքն ու հաւատը, որով նրանք բողոքում էին լիբերալ բուրժուազիայի դէմ, թէ ինչու նա էգօրիստ է, չէ մտածում ժողովրդի բարեկեցութեան մասին։ «Ժողովուրդը,—ասում են Մարքսըն ու Էնգելսը,—կամ այս լայնածաւալ ու առաձգական արտայայտութեան փոխարէն աւելի որոշակի ասելով՝ պրոլետարիատը, չէ հարցնում ամենեւին՝ արդեօք ժողովրդի բարեկեցութիւնը բուրժուայի համար էական թէ երկրորդական տեղ է բռնում, արդեօք բուրժուաները ուզում են պրոլետարներին թնդանօթի կերակուր դարձնել թէ չէ։ Պրոլետարիատը չէ հարցնում՝ ինչ են ուզում բուրժուաները, այլ ինչ են պարտաւոր, ինչ պէտք է անեն նրանք։ Նա հարցնում է՝ արդեօք ներկայ քաղաքական դրութիւնը—բիւրօկրատիայի տիրապետութիւնը—կամ թէ չէ այն, ինչ լիբերալներն են ձգտում—բուրժուազիայի տիրապետութիւնը—նրան (պրոլետարիատին) աւելի շատ միջոցներ պիտի հայթհայթէ իր նպատակներին հասնելու համար։ Դրա համար պրոլետարիատը միայն կարիք ունի Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի պրոլետարիատի քաղաքական դիրքը համեմատելու գերմանականի հետ, որպէսզի տեսնէ, որ բուրժուազիայի տիրապետութիւնը ոչ միայն նոր գէնքեր է տալիս պրոլետարիատի դէմ կոռելու համար, այլև շնորհում է նրան մի բոլորովին այլ դիրք—օրինական կուսակցութիւն դառնալու դիրք»¹²⁾։

Որքան այժմէական նշանակութիւն ունին Մարքս-Էնգելսի 40-ական թուականներին արտայայտած այս խօսքերը մեր (համառոտական) կեանքի համար։ Նոյն քաղաքական յեղաշրջումն է տեղի ունենում ներկայ Ռուսաստանում, ինչ կատարուել է այն ժամանակուայ Գերմանիայում։ Ռուսաստանի գիտակից պրոլետարիատը մահացու կռիւ մղելով ինքնակալական-բիւրօկրատական ընթիմի դէմ, ունի եւրոպական պրոլետարիատ-

¹²⁾ Fr. Mehring, «Die Geschichte der deutschen Sozialdemokratie» էր. 335—336.

տից աւանդուած այն միջազգային քաղաքական պարզ դաւանանքը, որ իր պատմական երկարատև ու անհաշտ թշնամու՝ բուրժուազիայի՝ դէմ կռուելու և նրան յաղթելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ՝ որ նա չքացնէ երկրի քաղաքական ինդիֆերենտիզմը, խորտակէ բռնակալ միապետութեան ու կամայական բիւրօկրատիայի կարծրացած ոյժը եւ ապահովէ բուրժուազիայի դասակարգային տիրապետութիւնը:

Մի այլ յօդուածի մէջ, գրուած նոյն թերթում, Մարքսն ու Էնգելսը մերկացնում են ժողովրդի և թագաւորի սուր հակադրական յարաբերութիւնները, ուր 'ի միջի այլոց ասում են. «Ժողովուրդը կազմում է թագաւորի համար քաղաքական բոլոր տարրերից ամենավտանգաւորը: Ոչ թէ այն ժողովուրդը, որի համար Ֆրիդրիխ Վիլհելմը (ժամանակակից պրուսական թագաւորը. Բ. Ի.) խօսում է, որ նա մի քայլի և գրօշի համար արտասուակից աչքերով երախտապարտ է մնում. այդ կարգի ժողովուրդը բոլորովին անվտանգ է, որովհետև դա գոյութիւն ունի միայն թագաւորի երեակայութեան մէջ: Սակայն իսկական ժողովուրդը՝ պրոլետարները, մանր գիւղացիները և ամբոխը,—սա է, ինչպէս Հօբն (անգլիական փրիստփայ 16—17-րդ դարում. Բ. Ի.) ասում է՝ *puer robustus sed malitiosus*—ուժեղ ու չարաճճի մանուկը: Այդ ժողովուրդը ամենից առաջ կը հարկադրէ ու կը պահանջէ Նորին Մեծութիւնից մի սահմանադրութիւն՝ ընդհանուր ձայնատուութեան իրաւունքով, համախմբումների, մամուլի և այլ ազատութիւն: Եւ երբ նա այդ բոլորն ունենայ, ապա կը գործադրէ դա, որպէսզի ըստ հնարաւորին շուտ խորտակէ թագաւորութեան և՛ ոյժը, և՛ յարգ ու պատիւը, և՛ պօէզիան»¹³⁾:

Հազիւ կէս տարի անցած բառացի իրականանում է այդ մարգարէութիւնը, այսինքն բռնկւում է գերմանական յեղափոխութիւնը:

Ինչպէս նախընթաց և վերջին տողերից պարզ երևում է, Մարքսը ժողովուրդը բառի տակ չի հասկանում ամբողջ խայտապղէտ ազգաբնակչութիւնը, այլ նրա ամենաստորին խաւերը, այսինքն նրա հիմքը, կորիզը—իսկական պրոլետարիատը և պրոլետարացման պրոցեսին անդարձ ենթարկուած խաւերը:

Նոյնպիսի մի կարևոր բանակոխ մղում են Մարքսն ու Էնգելսը այն քաղաքական ըադիկալիզմի (արմատականութեան, որի յայտնի պարագլուխը համարւում էր Կարլ Հայնցեն) դէմ, որի ներկայացուցիչները մի որևէ երկրի լէակցիայի հիմնա-

¹³⁾ Ibid, էր. 337

կան ու սկզբնական աղբիւրը համարում են այդ երկրի իշխանը, միապետը, փոխանակ ամբողջ քաղաքական սիւսեմը համարելու, սխառն, որի ընկերներն են հաւորութիւնը պահում ու պահպանում է ոչ թէ անհատ միապետը, այլ ամբողջ հին հասարակական կազմը. ոչ թէ իշխանութիւնն է հասարակութեան ծագման աղբիւրը, այլ վերջինն է առաջին ծագման աղբիւրը։ Նշանակում է, եթէ հիմքը, սկզբնական աղբիւրը ենթարկւում է նոր փոփոխութիւնների, չի կարող այդ հիմքի վրայ կառուցուած որեւէ հասարակական, քաղաքական կամ պետական ինստիտուցիա պահպանել իր ընկերներն են հաւորութիւնը։

Բանի գնում, այնքան աւելի էր ընդարձակւում Մարքսի ընկերական շրջանը։ Պատկառելի թիւ էին կազմում Բրիտանիա պալատանած օտարազգի էմիգրանտներն ու տեղական յեղափոխական ոյժերը։ Մարքսի օրով, նրա անմիջական ազդեցութեամբ առաջանում են երկու կարևոր և ժամանակին հմայք ունեցող ընկերութիւններ—գերմանական բանուորների խմբակցութիւնը և դեմոկրատական ընկերութիւնը։ 1847 թ. օգոստոս ամսին հիմնւում է գերմ. բանուորների ընկերութիւնը, ունենալով մօտ 100 անդամ, որոնք պատկանում էին բանուորութեան ամենազարգացած ու յառաջադէմ մասին։ Փոքր ինչ ուշ, նոյեմբեր ամսին, հիմնւում է դեմոկրատական ընկերութիւնը, որ միջազգային բնաւորութիւն էր կրում, ամփոփելով իր մէջ տեղական ու օտարերկրեայ դեմոկրատներին։ Պատուաւոր նախագահ էր ընկերութեան գնեցրալ Մելինէն՝ Անտվերպենի ազատարարը հոլանդացիների դէմ. նախագահն էր փաստաւորաւ ժողովրդական ժամանակաւոր կառավարութեան անդամը։ Փոխնախագահներն էին՝ գերմանացիների համար Մարքսը, լեհերի համար Լեյբկիլ՝ առաջ անդամ լեհական ժամանակաւոր կառավարութեան, ֆրանսիացիների համար՝ Իմբերտը, որ 1848 թ. փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ Տուլերի նահանգապետը դարձաւ։ Այդպիսով դեմոկրատական ընկերութեան առաջնակարգ ներկայացուցիչները այնպիսի մարդիկ էին, որոնք մի-մի խոշոր յեղափոխական դեր են խաղացել իրանց հայրենիքում։

Այն անտեսագիտական դասախօսութիւններից, որ Մարքսը կարդացել է գերմանական բանուորների ժողովներում, մընացել է միայն մէկը՝ «Lohnarbeit und Kapital» («Կարծու աշխատանք և կապիտալ») վերնագրով, այն էլ ոչ իր լրիւ մասերով։ Այդ փոքրիկ գրքով, որ իբրեւ ագիտացիայի միջոց մինչև օրս շատ անգամ հրատարակուել է գերմաներէն և թարգմանուել մի քանի լեզուներով, նաև հայերէն, պարզ ցոյց է

տալիս, թէ ինչպիսի վարպետութեամբ է Մարքսը հասարակ բանուորներին դիւրըմբռնելի ձևով բացատրել տնտեսական խնդիրներն ու գաղափարները:

Փոքրիկ բրոշուրայի մէջ Մարքսը համառօտ գաղափար է տալիս տնտեսական հիմնական հասկացողութիւնների ու երևոյթների մասին: Վարձու աշխատանք, աշխատանքի վարձ, գին, ապրանք, արժէք, յաւելեալ արժէք, կապիտալ, առևտրական ժրջութիւն, աշխատազրկութիւն, ինդուստրիական պահեստի գոռնդ և այլ գաղափարների ու երևոյթների մասին է խօսում Մարքսը:

Առօրեայ պարզ օրինակներով և մատչելի փորձերով Մարքսը բացատրում է բանուորներին. որ բանուորի աշխատանքի վարձը չէ կազմում մի մասը նրա արտադրած ապրանքի, այլ կապիտալիստը վարձում է բանուորին, վճարելով նրան փող իր արդէն ունեցած գումարից: Մարքսը հարցնում է՝ ինչպէս պէտք է որոշել աշխատանքի գինը, և պատասխանում՝ այնպէս, ինչպէս որոշում է իւրաքանչիւր ապրանքի գինը: Իսկ վերջինիս որոշումը ենթակայ է երրակի մրցութեան: Նախ մրցութիւն գնողների մէջ, որ արտայայտւում է նրանց ունեցած պահանջի չափով. ապա մրցութիւն վաճառողների մէջ, որ արտայայտւում է նրանց շուկայ արտահանած ապրանքի քանակով, այսինքն նրանց առաջարկի չափով. վերջապէս մրցութիւն գնողների և վաճառողների մէջ, որ արտայայտւում է պահանջի (գնելու) և առաջարկի (վաճառելու) տատանումներով:

Ապա Մարքսն անցնում է կապիտալի հետազօտութեան:

Կապիտալը հասարակական արդիւնաբերութեան մի յարաբերութիւն է, և իրաւ արդիւնաբերութեան յարաբերութիւն բիւրգերական (բուրժուական) հասարակութեան: Ապրանքների, փոխանակութեան արժէքների մի քանակ կապիտալ է կոչւում այն պատճառով, որովհետեւ նա որպէս մի ինքնանկախ հասարակական կարողութիւն, այսինքն որպէս հասարակութեան մի մասի կարողութիւն՝ պահպանւում և աճում է կենդանի աշխատանքի ոյժի անմիջական փոխանակութեան միջոցով:

«Մի դասակարգի գոյութիւն—ասում է Մարքսը,—որ ոչ մի բանի չի տիրում, բայց եթէ իր աշխատանքի կարողութեան, համարւում է կապիտալի անհրաժեշտ նախապայմանը: Կապիտալը չի կայանում նրանում, որ կուտակուած, առարկայացած աշխատանքը (հում նիւթեր, գործիքներ, մեքենաներ և այլն և. ի.) նոր արդիւնաբերութեան համար միջոց է ծառայում կենդանի աշխատանքին (բանուորի ոյժին, Բ. Ի.): Նա կայանում է նրանում, որ կենդանի աշխատանքը միջոց է ծա-

ռայում կուտակուած աշխատանքին, իր փոխանակութեան արժէքը պահպանելու և աճեցնելու համար: ¹⁴⁾

Սա մի փոքրիկ նմուշ է Կարլ Մարքսի երիտասարդական տարիների տնտեսագիտական զրոյցներից, որ պարզ վկայում է, թէ ինչպէս «Կապիտալի» հեղինակը մատչելի լինել ու արտայայտուել դիտէր նաև հասարակ բանուորների շրջանում:

Մարքսի ժամանակակից գործնական ագիտացիայից մնացել է մի ուրիշ հետաքրքրական դոկումենտ՝ մի ճառ ազատ առևտրի մասին, որ նա արտասանել է 1849 թ. յունուարի 9-ին Բրիւսելում, դեմոկրատների ընկերութեան մէջ: Այդ նոյն ճառը պէտք է արտասանէր Մարքսը միջազգային տնտեսագէտների (1847 թ. սեպտեմբերին Բրիւսել) համագումարում, որ սակայն չի յաջողում նրան:

Մարքսի դիրքը՝ ազատ առևտրի հարցի նկատմամբ, անմիջապէս բղիւղում է նրա՝ բուրժուազիայի եւ պրոլետարիատի դասակարգային կռուի սկզբունքային հասկացողութիւնից ու ղիլքից. մի դիրք, որ նոյն չափով արժէք ունէր և Էնգելսի համար: Յեղափոխական տեսակէտից Մարքսն ու Էնգելսը նոյնքան էին համաձայն անգլիական ազատ առևտրի հետ, որքան նրանք համաձայն էին գերմանական պաշտպանողական մաքսի (Schutzzoll) հետ: Մի երկրի թոյլ արդիւնագործութիւնը, ինդուստրիան (ինչպէս այն ժամանակ Գերմանիան ունէր) կարիք ունի սկզբնորում պաշտպանողական մաքսի, որպէսզի նոյն երկրի բուրժուազիան զարգանայ ու ամրապնդուէ իր կապիտալիստական սահմանում, որպէսզի նա, այնուհետեւ, ուժեղանայ իր սոցիալական ու քաղաքական դիրքի մէջ այնքան, որ կարողանայ միապետական-իւնկերական ընդմիջում, խորտակել և տեղի տալ բուրժուական դասակարգային տիրապետութեան:

Սակայն ընդհանուր առմամբ վերցրած պաշտպանողական մաքսի սխտեմը ունի պահպանողական, միջոցառող ազատ առևտրի սխտեմը յառաջադիմական-նուաճողական բնատրուածիւն: Վերջին սխտեմը արագացնում է տնտեսական զարգացման թափը, աւելի է սրում բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային յարաբերութիւնը և դրանով փութացնում սոցիալական յեղափոխութեան զարկուտը: Հէնց այդ յեղափոխական տեսակէտից է, ասում ենք, որ Մարքսն ու Էնգելսը ողջունել են անգլիական հացահատիկների օրէնքի վերացումը և ազատ առևտրի մոտքը: Ապա թէ ոչ ինքը՝ բանուոր դասակարգը, մի առանձին տնտեսական շահ չունի նոյն իսկ ազատ

¹⁴⁾ S. K. Marx, «Lohnarbeit und Kapital» էր. 28.

առևտրից: Մարքսը ցոյց է տալիս, որ անգլիական ազատ սիստեմի լիբերալ ներկայացուցիչները ցանկանում էին հացի գինը ձգել, որպէսզի դրանով իջեցնեն նաև բանւորի վարձը: Ոչ թէ վարձը կը բարձրանայ, այլ կապիտալի շահը (պրոֆիտ), և իրաւ այնքան, որքան կընկնէ կալուածային հասոյթը (Grundrente): Ըստ Մարքսի, կապատալիստական հասարակութեան մէջ ազատ առևտուրը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ կապիտալի ազատութիւն: Ուրեմն ոչ թէ ազատ առևտուրը շօշափելի օգուտներ է տալիս բանուոր դասակարգին, այլ անխնայ ենթարկում է նրան կապիտալիստական արդիւնաբերութեան հողանակի բոլոր հետևանքներին: Սակայն այդ ամենին պատճառ չէ, որ Մարքսը սկզբունքով պաշտպանէր պաշտպանողական մաքսը: Ծիշոտ այնպէս, ինչպէս՝ կոնստիտուցիօնալիզմ (սահմանադրականութեան) դէմ կռուել ամենեւին չի նշանակում արսուղիտիզմի (միահեծանութեան) բարեկամ լինել:

«Անգլիական բանուորները—ասում է Մարքսը—ցոյց են տուել ազատ առևտրի կողմնակիցներին, որ իրանք շատ լաւ են հասկանում գործարանատէրերի խաղերն ու ստախօսութիւնները: Եւ եթէ նրանք (բանուորները) այնուամենայնիւ միացել են լիբերալների հետ, ապա այդ միայն այն պատճառով, որպէսզի դրանով խորտակել կարողանային ֆէոդալիզմի վերջին հետքերը և գործ ունենային միայն մի հատիկ թշնամու (բուրժուազիայի) հետ: Բանուորները չեն սխալուել իրանց հաշուի մէջ, որովհետև հացահատիկների օրէնքների վերացումից յետոյ նրանց յաջողուել է անմիջապէս իրականացնել տասը ժամեայ աշխատանքի օրինագիծը (այսպէս կոչուած՝ Zehnstundenbill), որի համար բանուորները երեսուն տարի շարունակ կռուել են»: ¹⁵⁾

Մարքս-էնգելսի այդ տեսակէտը ամենայն ճշտութեամբ պահպանուել է միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ծրագրում: Պաշտպանողական մաքսի համար՝ ագրարական արդիւնքների նկատմամբ, սոցիալ-դեմոկրատիան ոչ միայն ձայն չէ տալիս պարլամենտում, այլև իր հակառակջագիտացիայով աշխատում է նոյն իսկ խաբուող գիւղացութեան իր կողմը գրաւել:

¹⁵⁾ K. Marx, «Rede über die Frage des Freihandels» էր. 8. (տես «Das Elend der Philosophie» գրքի II յաւելում, էր. 176).

4.

Բրիւսելը՝ կոմունիստական շարժման կենտրոնը.—Մարքս-Էնգելսի կենդանաձիգ ոյժն ու ազդեցութիւնը.—Մարքս-Էնգելսի անխնայ կրօնական պրոլետարիատի իլլիւզիօնիստ-ուտոպիստ ներկայացուցիչներէ դէմ (օրինակ Վայտլինգ, Գրիզեն և ուրիշները).—Մարքս-Էնգելսի յարաբերութիւնը Արդարների դաշնակցութեան հետ.—Վերջինիս կրկնակի համադրւածները և Մարքս-Էնգելսի միջոցով նրա վերածուածը «կոմունիստական դաշնակցութեան»:

Ամբողջ երեք տարուայ ընթացքում՝ Մարքսը Բրիւսել և դաժ ժամանակ, բելգիական մայրաքաղաքը դարձել էր կոմունիստական շարժման մի եռուն կենտրոնը: Մարքսն ու Էնգելսը կենդանի յարաբերութեան մէջ էին անգլիական շարտիզմի և Ֆրանսիական սոցիալիզմի յեղափոխական տարրերի հետ: Նրանք նամակագրութիւն ունէին մանաւանդ Իւլիան Հարնայի՝ «Northern Star» (չարտիստների օրգանի) խմբագրի և Ֆերդինանդ Ֆլոկոնի՝ «Reforme»-ի (Ֆրանս. սոցիալիստների օրգանի) խմբագրի հետ: Դեռ աւելի կարևոր էր նրանց նամակագրութիւնը «Արդարների դաշնակցութեան» («Der Bund der Gerechten», Լոնդոնում) և Էվերբեկի հետ, որ ղեկավարում էր դաշնակցութեան փարիզի համայնքը:

Մարքսն ու Էնգելսը անխղճի կապեր էին պահպանում և՛ իրանց հայրենիքի՝ Գերմանիայի հետ, մանաւանդ իրանց ծննդավայր Լոնոսսեան երկրի հետ. Գեօրնում ունէին նրանք բաւական թուով կողմնակիցներ: Շուտով Լոնդոնից գալիս է Մարքս-Էնգելսի մօտ Վայտլինգը—«բանուորական սոցիալիզմի» նշանաւոր ներկայացուցիչը. Շվէյցարիայից՝ Սերաստիան Ջայլերը, Վեստֆալենից՝ Եօզէֆ Վայդեմայերը: Ամենից մերձաւորը, սակայն, որ աճապարեց Բրիւսել, դա Վիլհելմ Վոլֆն էր—պրոլետարիատի «խիզախ, ազնիւ ու հաւատարիմ նախամարտնչողը», որին Մարքսը նուիրել է իր «Կապիտալի» առաջին հատորը:

Այդպիսով հետզհետէ Մարքսն ու Էնգելսը, մանաւանդ առաջինը, դառնում են այն կենտրոնական առանցքը, որոնց շուրջը խմբւում են կոմունիստական շարժման նուիրուած բոլոր յեղափոխական-դեմոկրատական անհատներն ու օրգանները: Մարքսի բնակավայրը դարձել էր այդ բոլորի համար հմայող ու ձգողական կենտրոն: Պրուսական կառավարութեան բոլոր ջանքերը՝ Մարքսին Բրիւսելից դուրս վաճառելու համար, անհետեանք են անցնում, սակայն միւս կողմից աւելի են տալիս

Մարքսին դուրս գալու պրուս-գերմանական հպատակութիւնից:

Մարքսի, ինչպէս և Էնգելսի, գիտնական-կարիւնետային զբաղմունքներին սերտ յարակցած առաջ էին ընթանում նրանց գործնական ագիտացիան, կոմունիստական պրոպագանդը, հրապարակախօսական կենդանի գործունէութիւնը, մանաւանդ ներանց տաք բանակուիւր իրանց բազմաթիւ քաղաքական հակաակորդների դէմ: Շատ անգամ նրանց գործնական այդ բազմակողմանի ու բարդ աշխատանքը խանգարում էր նրանց մասնագիտական ինտենզիւ զբաղմունքներին: Բայց և այնպէս հայրենազուրկ, քշուած ու հալածուած տիտանները անձնուրաց չափով նուիրած էին գործնականին ու տեսականին միաժամանակ, չէին խորշում ոչ մէկից և ոչ միւսից, գիտակցելով միշտ, որ պրոլետարիատի վախճանական էմանսիպացիան (ազատագրութիւնը), որին ցմահ նուիրուած էին նրանք, պիտի պայմանաւորուած լինի տեսական հիմնաւորուած ու անխաղտ ուսմունքով եւ գործնական անդուլ ջանքերով, դասակարգային կռուով:

Մարքսն ու Էնգելսը որքան անկեղծ ու ազնիւ բարեկամներ էին պրոլետարիատի ազատագրութեան նուիրուած և ընդմիշտ հաւատարիմ նախաձարտիկներին, նոյնքան անհաշտ թշնամիներ էին նրանք պրոլետարիատի իլլիւզիօնիստ եւ ուտոպիստ, ասել է՝ նրա պատմական ազատագրութիւնը չհասկացող ներկայացուցիչներին: Նրանք անողորմ ու անխնայ կրիտիկայի էին ենթարկում ամեն մի բնազանցական մշուշապատ հասկացողութիւն և ըէպական հիմքերից զուրկ ձեռնարկ, որոնք դրամագծօրէն հակասում էին նորագոյն պրոլետարիատի ազատագրութեան պատմական-գիտական հասկացողութեան և դասակարգային կռուի գաղափարին: Այդ էր պատճառը, որ ժամանակակից դեմոկրատներէից և կոմունիստներէից շատերը, — մանաւանդ նրանք, որոնք այլ շրջանում ու դպրոցում են դարբնել իրանց աշխարհայեացքը, — ոչ միայն չէին կարող Մարքս-Էնգելսի մերձաւոր ընկերները դառնալ, այլև անկարող էին դիւրութեամբ մարսել նրանց թունաւոր ու ներգործիչ կրիտիկան: Իլլիւզիօնիստ-ուտոպիստ սոցիալիստները դժգոհ էին գիտական սոցիալիզմի հանճարեղ հիմնադիրների սուր քննադատութիւնից, կարծելով որ դա խանգարում ու ֆլաստում է սոցիալիստական շարժման յաջող ընթացքին: Մինչդեռ Մարքսն ու Էնգելսը համոզուած էին, որ առանց պարզ ու հիմնաւորուած նպատակի, — մի բան, որ պիտի ամրապնդուի կրիտիկայի և անալիզների բովի մէջ, — անկարելի է անխաղտ ու յա-

րատե հիմքերի վրայ դնել պրոլետարիատի ազատագրութեան գործը:

Այդպիսի ուտոպիստ էր Պրուդոնը, որի հետ Մարքսը իր հռչակաւոր բանակիւնն ունեցաւ, այդպիսի տաղանդաւոր և ուտոպիստ-կոմունիստ էր յայտնի Վայտլինգը, որ իր յարաբերութիւնները խզեց Բրիւսելի կոմունիստների հետ և անցաւ Ամերիկա, այդպիսի համոզմունքի կուլ գնացած ֆանտաստ էր, վերջապէս, Քրիզէն, որի ամբողջ կոմունիզմը խարսխուած էր սիրոյ զգացմունքների վրայ: Վերջիններիս մասին կոմունիստները թռուցիկ են բաց թողնում Մարքս-էնգելսի հեղինակութեամբ, ուր նրանք սուր քննադատում են հեռացած աշխատողների ուտոպիական հասկացողութիւնը:

Սակայն կոմունիստները Մարքս-էնգելսի բերանով քննադատում են նաև «Արդարների դաշնակցութիւնը»:

«Արդարների դաշնակցութեան» սուր քննադատները—Մարքսն ու էնգելսը—դարձան միեւնոյն ժամանակ «Կոմունիստների դաշնակցութեան» («Der Kommunistenbund») հանճարեղ հիմնադիրները:

«Արդարների դաշնակցութիւնը» երդուեալ է միգրանտ յեղափոխականների (սկզբներում՝ բացառապէս գերմանացիներ) մի ընկերութիւն էր, հիմնուած Փարիզում: Նրա անդամները մեծ մասամբ ձեռնարհետաւոր բանուորներ էին, մանաւանդ դերձակներ: Ընկերութեան յայտնի անդամները, որոնց անունները պահպանել է սոցիալիստական գրականութիւնը, եղել են Հայնրիխ Բաուէր, Շապիր, Եոզէֆ Մոլլ, Կարլ Պֆենդէր և Գէորգ Էլկարիուս: Վերջինս աւելի, քան միւսները, յայտնի էր իր ըմբռնողութեան խորութեամբ և բկրթական մակերևոյթով: Նա աւելի պարզ ու անհամեմատ մարքսիստական հասկացողութիւն ունէր խոշոր կապիտալի մուտքի, յաղթանակի և նուաճումների նկատմամբ՝ մանր կապիտալի յետ նահանջման ու ոչնչացման գնով, քան գրականական այնքան փայլուն տաղանդ ունեցող Վայտլինգը, որի սոցիալիստական հասկացողութիւնը երբէք հեռու չանցաւ ուտոպիզմի սահմաններից:

«Արդարների դաշնակցութիւնը» կորցրեց իր զուտ գերմանական բնոյթը և ստացաւ միջազգային գոնաւորում, երբ նրա կենտրոնը Փարիզից տեղափոխուեց Լոնդոն (1839 թ.) և իր երկրորդական ճիւղերը հիմնեց Բելգիայում, Շվէյցարիայում, Գերմանիայում: Դաշնակցութեան սեկցիաներին մասնակցում էին գերմանացիներ, շվէյցարացիներ, սկանդինաւցիներ, հոլլանդացիք, ունգարացիներ, չեխեր, հարաւային սլաւոններ, ռուսներ և անգլիացիներ:

Այն ընհանուր ոգին, որ բովանդակութիւն և ուղղութիւն էր տալիս «Արդարների դաշնակցութեան» գործունէութեան, կրում էր զուտ ֆրանսիական բանուորական կոմունիզմի և գերմանական փիլիսոփայութեան դրօշմը: Սակայն այնքան, որքան աճում էր դաշնակցութիւնը քանակով, ուժեղանում իր ազդեցութեամբ, այնքան էլ նրա ղեկավար ոյժերին բաւարարութիւն չէին տալիս ոչ ֆրանս. բանուորական կոմունիզմը և ոչ էլ Վայտլինգի աղանդաւորական կոմունիզմը: Եւ այնքան, որքան աճում ու տարածւում էին Մարքս-էնգելսի բանաւոր ու գրաւոր պրոպագանդայի հոչակն ու ազդեցութիւնը ժամանակակից սոցիալիստական և դեմոկրատական շարժումների վրայ, այնքան էլ «Արդարների դաշնակցութեան» կենտրոնական ոյժերը խիստ կարիք էին զգում ամրապնդելու իրանց ընկերութեան գործունէութեան տեսական հիմքերը:

1847 թ., երբ Մարքսը Բրիւսել, իսկ էնգելսը Փարիզ էր գտնւում, դաշնակցութեան առաջնակարգ անդամներից մէկը՝ ժամագործ Մոլլը, առաջարկում է Մարքս-էնգելսին իր ընկերների անունից, մտնելու դաշնակցութեան մէջ, հաւաստիացնելով նրանց, որ դաշնակցութիւնը մտադիր է ձգել իր կոնսպիրատիւ բնաւորութիւնը և ընդունել նոր թէօրէտիկական (տեսական) տեսակէտներ: 1847 թ. ամառը տեղի է ունենում դաշնակցութեան համագումարը Լոնդոնում, որին մասնակցում է էնգելսը, որպէս Փարիզի անդամների ներկայացուցիչ: Այդ համագումարում ոչ միայն փոխւում է «Արդարների դաշնակցութեան» անունը և կրում «Կոմունիստների դաշնակցութիւն», այլ կատարելապէս փոփոխութեան է ենթարկւում կազմակերպութեան էութիւնը—երդուեալների ընկերութիւնը դառնում է պրոպագանդայի ընկերութիւն: Կոմունիստների վերանորոգուած բունդը չբացնում է հին դաշնակցութեան բոլոր կոնսպիրատիւ տենդենցները: Երագրի մէջ, առաջին յօդուածում՝ «Կոմունիստների դաշնակցութեան նպատակը» վերնագրով, գրուած են 'ի միջի այլոց հետեւալ տողերը. «Բուրժուազիայի կործանումը, պրոլետարիատի տիրապետութիւնը, դասակարգերի հակառակութեան վրայ խառնուած հին բիւրգերական հասարակութեան վերացումը և նոր հասարակական կազմի հիմնադրութիւնը՝ առանց դասակարգի և մասնաւոր սեփականութեան»: 16)

1847 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին կայանում է դարձեալ Լոնդոնում կոմունիստների երկրորդ կոնգրեսը, որին

16) Fr. Mehring, «Die Geschichte der deutschen Sozialdemokratie», I հատ. էր. 352

մասնակցում է ոչ միայն Էնգելսը, այլև Մարքսը։ Այդ կոնգրեսում արդէն կատարելապէս յեղաշրջւում է դաշնակցութեան հին կազմն ու ծրագիրը։ Երկրորդ կոնգրեսի գլխաւոր նպատակը կազմում էր բունդի տեսական մտքերի ու գաղափարների հիմնաւորումը։ Մարքսն ու Էնգելսը ներկայացնում են մի մանիֆեստի նախագիծ, որ ամբողջ տասնօրեայ նիստերում արծարծւում և հիմնապէս լուսարանւում է կոնգրեսին մասնակցող բոլոր ներկայացուցիչների (գերմանացիներ, ֆրանսացիներ, անգլիացիներ, բելգիացիներ, շվեյցարացիներ) կողմից, վերջնականապէս ընդունւում նախագիծը և յանձնարարւում Մարքս-Էնգելսի հեղինակելու «Բունդի կոմունիստական մանիֆեստը»։ «Արդարեւերի դաշնակցութեան» սենտիմենտալ նշանաբանը՝ «Բոլոր մարդիկ եղբայրներ են» փոխարինւում է հետեւեալ մարտական կոչով՝ «Պրոլետարներ՝ բոլոր երկրների, միացէ՛ք»։ 1848 թ., փետրուար ամսին լոյս է տեսնում «Կոմունիստական Մանիֆեստը» և անմիջապէս թարգմանւում նաև անգլիերէն, ֆրանսերէն, դանիերէն և լեհերէն։ Դրանով պատուաստւում է նորագոյն գիտական կոմունիզմի (կարգաւորչի) դրօշակը։

5.

«Կոմունիստական Մանիֆեստի» պատմական ծագումը.—Նրա տեական ոյժի հիմնական գրականը.—Մանիֆեստի էական մտքերն ու առաջնորդող գաղափարները.—Դասակարգային կռուի գաղափարը, պատմական մատերիալիզմի սկզբունքը.—Բուրժուազիայի ծագումը, նրա յեղափոխական դերը.—Բուրժուազիան և պրոլետարիատը, վերջինս ու միջին դասի զանազան խաւերը.—Պրոլետարիատի յաղթանակը.—Կոմունիստները և բանուորական կուսակցութիւնը, պրոլետարիատը.—Բուրժուական և կոմունիստական հասարակութիւնը.—Բուրժուական պարսաւանքները կոմունիստների դէմ.—Կոմ. Մանիֆեստի համաշխարհային հռչակը։

1847 թուականից սկսած Մարքսն ու Էնգելսը ղեկավարողի դերում գրական մասնակցութիւն են ունենում եւրոպական ամբողջ կոմունիստական շարժման, գլուխ կանգնելով առաջնակարգ քաղաքներում կազմակերպուած համայնքների։ «Կոմունիստական դաշնակցութեան» հաւատոյ հանգանակը դառնում է Մարքս-Էնգելսի հեղինակած «Կոմունիստական Մանիֆեստը», որ այնուհետև մնում է ընդ միշտ անխախտ հիմնաքարը գիտական սոցիալիզմի։

Փոքր ինչ ի մօտոյ ծանօթանա՞նք այդ փոքրածաւալ (ընդամենը 32 էրես), բայց մեծիմաստ ու հռչակաւոր աշխատութեան հետ։

«Կոմունիստական Մանիֆեստը» ամփոփում է իր մէջ կլաս-սիքական ձեւակերպումներով այն բոլոր հետեւեցներն ու եզրակացութիւնները, որոնց Մարքսն ու Էնգելսը վաստակել են իրանց գործնական կոռւի և տեսական ուսումնասիրութիւնների ընթացքում:

Մարքս-Էնգելսի «Մանիֆեստը» մի պատմական յիշատակարան, վալերագիր է առաջին կարգի. պատմական նոյն իսկ այն մտքով, որ նա անհրաժեշտօրէն ծագել կարող էր միայն այն պատմական մոմէնտում. երբ նա իրապէս լոյս է տեսել: Եթէ նա, այնուամենայնիւ, աւելի քան 50 տարի շարունակ պահպանել է իր Թարմութիւնը, մաշելով այնքան շատ ծրագրների ու սխտեմների մի երկարամեայ շրջան. եթէ նա, աւելի քան, հազնաստակ յեղաշրջումների դարեշրջանում դեռ աւելի ու աւելի համասփիւռ արժէք ու նշանակութիւն է ստանում երկրագնդի մարտնչող պրոլետարիատի շարքերում, ապա այդ համաշխարհային յաջողութիւնը միայն և բացառապէս պարտական է այն խորաթափանց հայեացքին, որով «Մանիֆեստը» հեղինակները ճշտութեամբ ըմբռնել ու նմանաչել են Նորագոյն բիւրգերական (բուրժուական) հասարակութեան զարգացման պրոցեսը և խորին հմտութեամբ արտայայտել ու բացատրել այդ պրոցեսը դեռ այն ժամանակ, երբ այդ հասարակութիւնը դեռ նոր էր ոտք դրել իր գոյութեան պատմական շէմքի վրայ:

Որո՞նք են մանիֆեստի հիմնական մտքերն ու առաջնորդող գաղափարները:

Մարդկային հասարակութեան ամբողջ պատմութիւնը եղել է դասակարգային կռիւների պատմութիւն: Ժամանակակից պատմութիւնը կազմում է բուրժուազիայի եւ պրոլետարիատի դասակարգային կռուի պատմութիւնը: Դասակարգային համախմբումներն ու կազմաւորումը համարում են արդիւնք տնտեսական որոշ արդիւնաբերութեան ու բաշխման (բաժանման) յարաբերութիւնների, որոնցով պայմանաւորում են նաև դասակարգային տիրապետութեան յարաբերութիւնները: Տնտեսական արդիւնաբերութիւնը և նրանից անհրաժեշտօրէն հետեւող հասարակական կեանքի կազմաւորումը ամեն մի պատմական դարեշրջանի՝ կազմում է նոյն դարեշրջանի քաղաքական և ինտելեկտուալ (մտաւորական) պատմութեան հիմնաքարը: Դասակարգային կռիւները եղել են շահագործող ու շահագործող, ենթարկող ու տիրապետող դասակարգների կռիւներ՝ մարդկային հասարակութեան զարգացման զանազան առաքանների վրայ: Սակայն նոյն այդ կռիւը հասել է արդի

բիւրգեւական հասարակութեան օրով այն աստիճանին, երբ շահագործող ու ճնշուած դասակարգը՝ պրոլետարիատը չի կարող այլևս շահագործող ու ճնշող դասակարգից՝ բուրժուազիայից իրան ազատագրել, առանց միաժամանակ ազատելու ընդամիշտ ամբողջ հասարակութիւնը՝ շահագործութիւնից, ճնշումներից եւ դասակարգային կոիւններից:

Մանիֆեստի առաջին հատուածի մէջ՝ բուրժուազիա եւ պրոլետարիատ վերնագրով, Մարքսն ու Էնգելսը համառօտաբար ուրուագծում են բուրժուազիայի պատմական ծագումը, որպէս արդիւնք պատմական զարգացման երկար ընթացքի՝ օղակուած մի շարք արդիւնաբերական և հաղորդակցական յեղաշրջումներով:

«Բուրժուազիայի զարգացման աստիճաններից իւրաքանչիւրը—ասում է Մանիֆեստը—առաջնորդուել է քաղաքական համապատասխան յառաջադիմութեամբ. նա եղել է մի ճնշուած դաս աւատական (ֆէօդալական) տէրերի տիրապետութեան ներքոյ, ապա զինուած և ինք զինքը կառավարող ասոցիացիա (խմբակցութիւն) կոմունայի մէջ. այստեղ ինքնանկախ քաղաքային հանրապետութիւն, այնտեղ՝ երրորդ հարկատու դասը միապետութեան մէջ. այնուհետեւ մանուֆակտուրայի ժամանակ հակակշիռ տարրը ագնուականութեան դէմ՝ տոհմային կամ աբսոլյուտիստ միապետութան մէջ. վերջապէս մեծ ինդուստրիայի և համաշխարհային վաճառանոցի շրջանում՝ նորագոյն իրաւական-ներկայացուցչական պետութեան մէջ, բուրժուազիան մարտնչել և բացառապէս իրան է գրաւել քաղաքական տիրապետութիւնը: Արդի պետական ոյժը լոկ մի յանձնաժողով է (յանձնարարուած մարմին), որ հոգում ու վարում է ամբողջ բուրժուա դասակարգի ընդհանուր գործերը:»¹⁷⁾

«Կոմ. Մանիֆեստը» սուր շեշտումներով ուրուագծում է այն վերին աստիճանի յեղափոխական դերը, որ քաղացել է բուրժուազիան իր պատմական կեանքում: Նա իր քաղաքական տիրապետութեամբ անխնայ տրորել ու ջախջախել է ամեն բան, ինչ ֆէօդալական, նահապետական, իդիլիական բնատրուութիւն ունի: Հին ու միջին դարերի կրօնական ու քաղաքական իլլիդիաներով քողարկուած շահագործութեան փոխաբէն, բուրժուազիան նոր դարերում հրապարակ է հանում իր բացէիբաց, անամօթ, անմիջական և արիւնսքամ շահագործութիւնը: Բժիշկին թէ իրաւաբանին, կղերին թէ բանաստեղծին, գիտութեան մարդուն և այլն բուրժուազիան դարձրել է

17) K- Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest» էր. 11.

անխտիր իր վարձկան աշխատուորները: Բուրժուազիան իր հարիւր տարուայ դասակարգային տիրապետութեան ընթացքում աւելի մեծ ու մասսայական, կոլոսալ չափերով է ձեռք բերել արդիւնաբերութեան ոյժեր, քան հին ու միջին դարերի բոլոր սերունդները միասին վերցրած: Բնութեան ոյժերի, մեքենաների նուաճումները, քիմիայի զործադրութիւնը ինդուստրիայի և հողագործութեան վրայ, շոգենաւը, երկաթուղիները, էլեքտրական հեռաթելէն, ամբողջ աշխարհամասերի բերքի և գետերի նաւագնաց դարձնելը,—նախկին ձր դարում կարելի էր երազել, որ այսքան արտադրողական (productiv) ոյժեր կան թագնուած հասարակական աշխատանքի ծոցում:

Սակայն արդի բիւրգեւական հասարակութիւնը, որ ստեղծագործել է արդիւնաբերութեան և հաղորդակցութեան այնպիսի հզօր միջոցներ, նման է այն կախարդապետին, որ անկարող է այլևս իշխել այն ստորերկրեայ վիթխարի ոյժերի վրայ, որոնց նա կեանքի է կոչել: Այն զէնքերը, որոնցով բուրժուազիան կործանել է Ֆէօդալիզմի հոյակապ շէնքը, այժմ ուղղուել են Տէնց իրա՝ բուրժուազիայի դէմ: Սակայն բուրժուազիան ոչ միայն կռել-կոփել է այն զէնքերը, որոնք նրան մահ են սպառնում, այլև արտադրել է այն մարդկանց, որոնք պիտի կրեն այդ զէնքերը—դրանք են նորագոյն բանուորները, պրօլետարները, որոնք միայն այնքան են ապրում, որքան նրանք աշխատանք են գտնում, և ահաբան աշխատանք են գտնում՝ որքան իրանց աշխատանքը անեցնում է կապիտալը:

Այնուհետև նոյն հատուածում Մանիֆեստը ամփոփ գծերով նկարագրում է պրօլետարիատի ծագումը, ինչպէս յետոյ նոյնը ընդարձակօրէն հետազօտել են Մարքս-էնգելսը իրանց աշխատութիւնների մէջ:

Այն բոլոր դասակարգերը, որոնք կանգնած են այսօր բուրժուազիայի դէմ յանդիման, դրանցից միայն պրօլետարիատն է իսկական ու իրական յեղափոխական դասակարգը: Մինչդեռ միև դասակարգերը այլասերում են և կործանւում մեծ ինդուստրիայի յաղթական նուաճումների ազդեցութեան տակ, ինքը՝ պրօլետարիատը, նոյն ինդուստրիայի անմիջական և հարազատ արդիւնքն է, ծնունդն է: Մանր արդիւնագործը, մանր առևտրականը, արհեստաւորն ու գիւղացին—դրանք բոլորը կուռն են բուրժուազիայի դէմ, որպէսզի իրանց գոյութիւնը, իբրև միջին դասի խաւեր, պահպանեն խորտակումից: Նըշանակում է նրանք յեղափոխական չեն, այլ յետադիմական (րէակցիօներ), որովհետև նրանք աշխատում են յետ դարձնել պատմական անիւը: Իսկ մուրացիկ պրօլետարիատը

(Lumpenproletariat)—հին հասարակութեան ամենաստորին խււերի այդ բացասական փթութիւնը—կարող է պրոլետարական յեղափոխութեան ժամանակ երբեմն առջ նետուել շարժման մէջ, սակայն նա, ըստ իր ամբողջ կենցաղական վիճակի, աւելի շուտ պատրաստակամ կը լինի յետադիմական ինտրիգաներին զոհուելու, իրան ծախելու:

Մինչև այժմ եղած բոլոր շարժումները (յեղափոխական) ծագել են փոքրամասնութիւնից (մինօրիտէտ) կամ յօգուտ փոքրամասնութեան շահերի: Պրոլետարական շարժումը, ընդհակառակը, կազմուծ է արագին մեծամասնութեան (մայօրիտետ) ինքնուրոյն շարժումը յօգուտ արագին մեծամասնութեան շահերի: Պրոլետարիատը, ժամանակակից հասարակութեան ամենաստորին խււը, չի կարող ինքն իրան բարձրացնել, առանց բոլոր խաւերի—ամբողջ պաշտօնական հասարակութեան—վերնաշէնքը օգը ցնդեցնելու: Պրոլետարիատի դասակարգային կոիւր բուրժուազիայի դէմ ամենից առաջ ազգային կոիւ է: ազգային ոչ ըստ իր բովանդակութեան, այլ ըստ իր ծելի: Ամեն մի երկրի (և ամեն մի ժողովրդի) պրոլետարիատ պէտք է բնականաբար նախ իր հաշիւները վերջացնէ իր սեփական բուրժուազիայի հետ: Պրոլետարիատի զարգացումը առաւել կամ պակաս չափով մի քօղարկուած բաղաբացիական կոիւ է գոյութիւն ունեցող հասարակութեան ծոցում մինչ այն առտիճանը, երբ բաց է ի բաց կրօնկուէ յեղափոխութիւնը և պրոլետարիատը՝ բուրժուազիայի ուժերն խորտակուծով, կը հիմնէ իր տիրապետութիւնը: Բուրժուազիայի անդարծ անկումը նոյնքան է անխուսափելի, որքան անխուսափելի է պրոլետարիատի յաղթութիւնը:

Սրանք են «Կոմունիստական Մանիֆեստի» առաջին հատուածի հիմնական դադափարները:

Երկրորդ հատուածի մէջ՝ «Պրոլետարներ եւ Կոմունիստներ» վերնագրով, Մանիֆեստը որոշում է կուժունիստների ճշգրիտ դիրքն ու վերաբերմունքը դէպի առհասարակ պրոլետարները:

«Կոմունիստները—ասում է նա—չեն կազմուծ մի առանձին կուսակցութիւն՝ միւս բանաւորական կուսակցութիւնների հանդէպ: Նրանք չունին ամբողջ պրոլետարիատի շահերից տարբերուող առանձին շահեր: Նրանք չեն առաջադրում առանձին կարգի պրինցիպներ և ըստ դրանց ձևակերպում (modeln) պրոլետարական շարժումը: Կոմունիստները տարբերուծ են պրոլետարական միւս կուսակցութիւններից միայն նրանով, որ նրանք մի կողմից զանազան ազգային կոիւների ժամանակ

բարձր են պահում համայն պրոլետարիատի ընդհանուր շահերը՝ անկախ ազգութիւններից, և կուռւմ յանուն նրանց. իսկ միւս կողմից կոմունիստները պաշտպանում են ընդհանուր շարժման շահերը զարգացման այն զանազան աստիճանների վրայ, որ կտրել անցել է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև եղած կռիւր։ Նշանակում է կոմունիստները կազմում են բոլոր երկրների բանուորական կուսակցութիւնների՝ գործնականապէս ամենավճռական և առաջավար մասը։ Նրանք պրոլետարական միացած մասսայից բարձր են կանգնած իրանց տեսական ըմբռնողութեամբ՝ այն պայմանների, որ ունի պրոլետարական շարժումը։¹⁸⁾

Ըստ մանիֆեստի, նոյնն է կոմունիստների և միւս բոլոր բանուորական կուսակցութիւնների մերձաւոր նպատակը—պրոլետարիատին դատակարգ դարձնելը, բուրժուազիայի տիրապետութեան խորտակումը, քաղաքական ոյժի նուսնումը պրոլետարիատի միջոցով։

Մանիֆեստը ցոյց է տալիս. մատերիալիստական տեսակէտից, որ կոմունիստների տեսական մտքերը երբեք չեն հիմնուած այնպիսի իդէանների կամ պրինցիպների վրայ, որոնք գտնուել են աշխարհի այս կամ այն վերանորոգչից, այլ որ այդ մտքերը ծագել ու աճել են աւելի շուտ գոյութիւն ունեցող դասակարգերի կռուի իրական յարաբերութիւններից։

Կոմունիստների՝ մասնաւոր սեփականութիւնը վերացնելու ձգտումների դէմ առարկում են բուրժուական իդէոլոգները, որ իբր դրանով վերանում է առհասարակ անձնական ազատութեան, գործնէութեան և անկախութեան հիմքը։

Բայց չէ՞ որ ներկայ հասարակութեան մէջ—ասում են կոմունիստները այդ առարկութեան դէմ—մասնաւոր սեփականութիւնը փաստապէս վերացուած է 9/10 մասի համար. հէնց մասնաւոր սեփականութիւնը գոյութիւն ունի նրանով, որ նա վերացուած է 9/10-ական մասի համար։ Սեփականութիւնը, իր այսօրուայ կազմով, ներկայացնում է հակառակ դրութիւնը կապիտալի և վարձու աշխատանքի։ Կապիտալը անձնական ոյժ ու կարողութիւն չէ այժմ, այլ հասարակական։ Նա մի հանրական արդիւնք է և կարող է միայն հասարակութեան շատ, անգամ բոլոր անդամների համայնական գործնէութեամբ շարժման մէջ դնուել։ Եթէ այդ մասնաւոր սեփականութիւնը դառնայ հասարակութեան բոլոր անդամների պատկանելիութիւնը, ապա դրանով ոչ թէ անձնական սեփականութիւնն է վերած-

18) K. Marx und F. Engels, *Ibid*, էր. 18

ւում հասարակականի, այլ վերածւում է սեփականութեան հասարակական ընդթը, երբ նա կորցնում է իր դասակարգային ընդթը:

Մանիֆեստը հետեւեալ խօսքերով և որոշում բուրժուական և կոմունիստական հասարակական կարգերից մի քանիսի տարբերութիւնները: «Բուրժուական հասարակութեան մէջ կենդանի աշխատանքը (բանուորի ոյժը: Բ. Ի.) կազմում է մի միջոց կուտակուած աշխատանքը (կապիտալի բաղկացուցիչ մասերը՝ մեքենաներ, գործիքներ, հում նիւթեր և այլն Բ. Ի.) աճեցնելու: Իսկ կոմունիստական հասարակութեան (կարգաւ սոցիալիստական հասարակութեան. Բ. Ի.) մէջ, ընդհակառակը, կուտակուած աշխատանքը կազմում է մի միջոց, բանուորների կեանքի պրոցեսը երկարացնելու, բարեկեցիկ և նպաստաւոր դարձնելու համար: Բուրժուական հասարակութեան մէջ անցեալը տիրապետում է ներկայի վրայ, մինչդեռ կոմունիստական հասարակութեան մէջ ներկան տիրապետում է անցեալի վրայ: Բիւրգերական հասարակութեան մէջ կապիտալը ինքնուանկալի է և անձնական, մինչդեռ գործունեայ անհատը զուրկ է անկախութիւնից և անձնական ինքուրոյնութիւնից»:¹⁹⁾ Նըշանակում է ըստ կոմունիստական դաւանանքի՝ «ազատութեան վերացում» առածդ ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ բուրժուական ազատութեան (անարխիստական մրցութեան և շահագործութեան) և բուրժուական անճաւորութեան (անաշխատութեան և ձրիակերութեան) վերացում:

Ապա Մանիֆեստը պատասխանում է կոմունիստների դէմ ուղղուած զանազան պարսաւանքներին, որ իբր նրանք ուզում են վերացնել ընտանիքն ու հայրենիքը:

Թէ ինչ հայեացք են ունեցել գիտնական սոցիալիզմի հիմնադիրները և ինչ դիրք ունի այժմ միջազգային սոցիալ-դեմոկրատիան այդ վերոյիշեալ և դրանց նման մի շարք երևոյթների ու սկզբունքային խնդիրների վերաբերմամբ, դրանց մասին կը խօսենք մենք դեռ շատ յետոյ, երբ անցնենք մարքսիզմի էութեան:

Մանիֆեստի երրորդ հատուածը՝ «Սոցիալիստական եւ կոմունիստական գրականութիւն» վերնագրով, նուիրուած է սոցիալիստական զանազան հոսանքներին, որոնց մասին մենք սխտեմատիկաբար կը խօսենք դարձեալ յետոյ, երբ խօսք լինի նախամարքսիստական շրջանի մասին:

Նոյնը պիտի ասենք և չորրորդ հատուածի մասին «Կոմունիստ-

¹⁹⁾ Ibid, հր. 20

ների դիրքը դեպի զանազան ընդդիմադրական կուսակցությունները՝ վերնագրով: Թէ ինչ սկզբունքային դիրք ունի սոցիալդեմոկրատիան գործնական-քաղաքական հողի վրայ դէպի իր դանազան քաղաքական հակառակորդները—իրանից հեռու կամ մօտ կանգնած կուսակցությունները—դա կը տեսնենք մենք յետոյ:

Մանիֆեստը եզրափակում է իր պատմական փիլիսոփայությունը հետեւել խօսքերով. «Կոմունիստները խուսափում են իրանց կարծիքներն ու դիտաւորութիւնները ծածկելուց: Ներանք յայտարարում են բաց ու համարձակ, որ իրանց նպատակները կարող են իրականանալ միայն մինչ այժմեան հասարակական կարգերի ուժգին խորտակման գնով: Թող տիրապետող դասակարգերը դողան կոմունիստական յեղափոխութեան առաջ, այդ միևնոյն է: Պրոլետարները չունեն դրա մէջ ոչինչ կորցնելու, բայց եթէ իրանց շղթաները: Նրանք պիտի գրաւեն մի ամբողջ աշխարհ: Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»: ²⁰⁾

«Կոմունիստական Մանիֆեստը»—քառասնական թուականների կոմունիստների հասարակական-քաղաքական դաւանանքը—իր լոյս տեսնելու օրից (1848 թ. փետրուարի սկզբին) սկսած դարձաւ նորագոյն բանուորական շարժման հիմնաքարը, կրեց իր վրայ այն երկարամեայ շրջանի պատմութիւնը, ինչպիսին ունեցաւ ինքը՝ միջազգային սոցիալդեմոկրատիան և դարձաւ վերջինիս ծրագիրը այնպէս, ինչպէս «Կապիտալը» դարձաւ նրա գիտութիւնը:

Այսօր Մանիֆեստը դարձել է—ասում է Ֆ. Մերինգը—համայն սոցիալիստական գրականութեան մէջ ամենատարածուած ու ամենամիջազգային արտագրութիւնը. այն ընդհանուր ծրագիրը, որի անունով ազատական պարտաւորում են բոլոր երկրների միլիոնաւոր բանուորները՝ Սիբիրիայից մինչև Կալիֆորնիա, առաջ վարելու իրանց դասակարգի ազատագրութեան մեծ կռիւը: ²¹⁾

Խիստ խոշոր ու եղակի է Մարքս-էնգելսի՝ Մանիֆեստի հեղինակութեամբ արած ծառայութիւնը: Մի այնպիսի ժամանակ, երբ Եւրոպայի բանուորութեան առաջաւոր մասի դասակարգային ճակատագրի հետ խաղում էին զանազան աղանդաւոր ուսուպիստ—կոմունիստներ, Մարքսն ու Էնգելսն էին, որ պրոլետարիատի մտածողութեան նւ գործնէութեան համար

²⁰⁾ Ibid. Էրես 32.

²¹⁾ Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. 1 Էր. 371

մի ուղիղ շափող գծեցին եւ մշակեցին նրա տեսական ուսմունքի եւ գործնական տակտիկայի հիմնական ուղղութիւնը:

Եթէ Մարքսն ու Էնգելսը—ճիշտ նկատում է Վ. Լիբկնեխտը—ուրիշ ոչ մի բան չստեղծագործէին, այլ յաւէտ կու գնային այն յեղափոխութեան, որի նախընթաց օրը նրանք այնքան հարգարէական նախատեսութեամբ լոյս աշխարհ հանեցին Մանիֆեստը,—այնուամենայնիւ միայն դրանով (Մանիֆեստով) իսկ նրանք անմեռ ու անմահ անուն կը վաստակէին: 22)

6.

40-ական թուակ. յեղափոխութիւնը ցամաքային Եւրոպայում.—Մարքսը Փարիզում, ապա Բեռլինում.—Մարքսի քաղաքական-յեղափոխական օրգանը.—Վերջինիս ունեցած գերն ու ծառայութիւնը.—Մարքսի օրգանը Փարիզի փետրուարեան յեղափոխութեան մասին.—Գերմանական բէակցիան, պետական կազմի խնդիրը.—Գերմանայի պատմական յանցանքը.—Կոլլ. Ռուսաստանի դէմ.—Լեհական, իտալական, ունգարական հարցերը.—Լեհաստանի անկախութեան նշանակութիւնը.—Պանսլաւոնական շարժումը.—Մարքսի հրապարակախօսութեան արժէքը:

1848 թուականը համարւում է բուրժուազիայի յեղափոխական պատմութեան ամենանշանակալից ու արժանայիշատակ տարիներէից մէկը: Յեղափոխութիւն ոչ միայն իր իսկական կլասիք հայրենիքում—Ֆրանսիայում,—որ մաշել է 1789 և 1830 յեղափոխական դարագլուխ կազմող տարիները, այլև ցամաքային Եւրոպայի խոշոր քաղաքական միջնավայրերում՝ Գերմանիայում, Աւստրիայում:

1848 թ. փետրուարի 22-ին, «Կոմունիստական Մանիֆեստը» լոյս տեսնելուց փոքր ինչ յետոյ, բռնկւում է Ֆրանսիայի (18 տարի անհանգիստ մնալուց յետոյ) փետրուարեան ուժեղ յեղափոխութիւնը և իր անդիմադրելի շոինդն ու արձագանքը նետում մինչև այդ ժամանակ լուռ հանդիսատես գերմանական հողը:

Բիւրսելում, Մարքսի բնակավայրում, տեղի է ունենում անդմաւից դեմոնստրացիա: Բելգիական կառավարութիւնը, որ մինչև այդ ժամանակ մերժել էր պրոլետական կառավարութեան պահանջը՝ Մարքսին Բելգիայից հեռացնելու համար, այս անգամ յետ չմնաց պրոլետական կառավարութիւնից: Մարքսին ձերբակալած հեռացրեց նա Բելգիայի սահմաններից: Մարքսը

22) W. Libknecht, «Karl Marx zum Gedächtnis» էր. 9.

աճապարեց Փարիզ, ուր հրաւիրեց նրան իր ընկեր Ֆլոկոնը՝ «Réforme» արմատական-դեմոկրատական օրգանի շէֆ խմբագիրը, որ այդ ժամանակ ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան անդամ էր ընտրուել։ Բնորոշ է հանրապետական կառավարութեան դեմոկրատ անդամի Մարքսին ուղղած նամակը.²³⁾

«Քաջ ու հաւատարիմ Մարքս!

Ֆրանսիական հանրապետութեան հողը ապաստարան է ազատութեան բոլոր բարեկամների համար։ Բռնակալութիւնը հալածել է ձեզ, բայց ազատ Ֆրանսիան կրկին բաց է անում իր դռները ինչպէս ձեզ, այնպէս էլ այն բոլորի առաջ, որոնք կուռւմ են այն սուրբ գործի համար, որ միացնում է բոլոր ժողովուրդներին։ Ֆրանսիական կառավարութեան ամեն մի ներկայացուցիչ պէտք է իր պաշտօնը վարէ այս մտքով և ուղղութեամբ։ Եղբայրական ողջոյն։

Ֆերդինանդ Ֆլոկոն, անդամ ժամանակաւոր կառավարութեան։

Մարքսը սիրով հետևում է այդ հրաւերին, իհարկէ։ Բայց նրան վիճակուած չէր երկար մնալու Փարիզում։ Գերմանական հողի վրայ ևս բռնկւում է անպարտելի յեղափոխութիւնը և կլանում իր մէջ լեգիոններով մարտնչող ոյժեր։ Նոյն թուականի մարտի 13-ին Վիեննան, իսկ 18-ին Բեռլինը դառնում են մարտական-ազդմական հուրհրատող դաշտեր։ Մարքսը ու էնգելսը, որոնց համար այնքան թանգ է եղել իրանց հայրենիքի պրոլետարիատի քաղաքական ազատագրութիւնը՝ բռնակալ ըէժիմի ճիրաններից, իսկոյն աճապարում են Գերմանիա, յեղափոխական շարժման տոն տալու համար։ Մարքս-էնգելսի հետ գերմանիա են գալիս ոչ միայն միւս գերմանացի յայտնի կոմունիստները, այլ և Փարիզ ապաստանած բազմաթիւ էմիգրանտ բանուորներ։

Համատարած յեղափոխութեան շրջանում «Կոմունիստական դաշնակցութիւնը» կորցնում է արդէն իր գոյութեան իմաստը։ Անդամների սահմանափակ քանակը և մեկուսացած դրութիւնը անկարող էր այլեւս ղեկավարել յեղափոխականացած մասսայի մարտական ընթացքը։ Եւ վերջապէս յեղափոխութեամբ հէնց ինքը բանուոր դասակարգը հնարաւորութիւն է ստանում հրապարակական պրոպագանդա անելու—իւրաքանչիւր բանուորութիւն իր հայրենական միջնավայրում։

Մարքսն ու էնգելսը, ապա նրանց միւս անբաժան ընկեր-

²³⁾ «Karl Marx», Festausgabe von «Wiener Arbeiterzeitung» էր. 6.

ները՝ Վիլհելմ Վոլֆ, Ֆերդինանդ Վոլֆ, Էրնստ Դրոնկե, Ֆերդ. Ֆրայլիգերատ, Գէորգ Վերթ—գրանք բոլորը կենտրոնանում են Քեօլն և կազմում նոր հիմնուած թերթի՝ «Neue Rheinische Zeitung»-ի խմբագրութեան անդամները, որոնց շէֆ խմբագիրը դառնում է Մարքսը:

40-ական թուականների սկզբին Մարքսը համարում էր նոյն քաղաքում հրատարակուող նմանօրինակ («Rheinische Zeitung») անուն կրող օրգանի խմբագիրը՝ իբրև բուրժուական արմատական իդէօլոգ, իսկ նոյն թուականի վերջում Մարքսը հրադարակ է գալիս հսկայական մետամորֆոզներ կրելուց յետոյ—իբրև պրոլետարական կոմունիստ իդէօլոգ, Մանիֆեստի նման երկի հանճարեղ հեղինակ:

Թերթի առաջին համարը լոյս է տեսնում 1848 թ. յունիսի 1-ին:

Մարքսի առհասարակ հրապարակախօսական գործնէութեան ամենափայլուն շրջանը կազմում է «Neue Rheinische Zeitung» օրգանի կարճ ժամանակեայ (1848 թ. յուն. 1—1849 թ. մայիսի 19-ը) հրատարակութիւնը: Երկար կանգառնել այդ թերթի ամբողջ պատմութեան—կարճ, բայց հարուստ պատմութեան վրայ, մեզ շատ հեռու կը տանէր. սակայն մենք պարտաւոր ենք համառօտակի յիշատակել այստեղ կարևոր և սկզբունքային արժէք ունեցող այն խնդիրները, որոնց վերաբերեալ գրել ու պայքարել է Կարլ Մարքսը:

«Neue Rheinische Zeitung» օրգանը միակ թերթն է եղել, ըստ էնգելսի վկայութեան, որ ժամանակակից դեմոկրատական շարժման մէջ պաշտպանել է պրոլետարիատի դասակարգային շահերը և անխտիր ու անողորմ կռուել յանուն այդ շահերի բոլոր հակապրոլետարական տարրերի, կուսակցութիւնների դէմ:

Սակայն նա միակն է եղել նաև, որ այնքան ջերմ ու խրախուսող մասնակցութիւն է ունեցել ժամանակակից յեղափոխական շարժման, մանաւանդ գերմանական յեղափոխութեան մէջ: Մի կողմից իր կրակոտ ու վառվռուն յօդուածներով, միւս կողմից իր կենդանի ագիտացիայով ու պրոպագանդայով, իբրև տեղական դեմոկրատական ընկերութեան պարագլուխ, Մարքսը ունեցել է Քեօլնում ամենաբեղմնաւոր ու անդուլ գործնէութեան տարիներից մէկը՝ 48—49 թուականին: Մարքսի օրգանը սուր ու ջախջախիչ կրիտիկայի օբեկտ էր ընտրել ոչ միայն գերմանական աբսօլիւտիզմը, Պրուսիայի իւնկեր-բուրժուատական ըշակցիան, այլև առհասարակ ամեն մի միջազգային յետադիմական-բռնակալական քայլ, որ գործում էր ժամանակակից եւրոպական քաղաքականութիւնը: Չի եղել մի «ազգային-քա-

դաքական» արժեքատու շարժում՝ ու խնդիր, որի վերաբերմամբ արտայայտած չլինի Մարքսի օրգանը իր սկզբունքային դիրքը: Զի եղել, մանաւանդ, ժամանակակից եւրոպայում մը յեղափոխական շարժում, որի զոյուծեան իմաստը չքննած և պատմական արժէքն ու նշանակութիւնը քննահատած չլինի Մարքսի մարտական-ազգական օրգանը:

Փարիզի բանուորները խոշոր հարուած են կրել—կոչուած է «Neue Rhenische Zeitung», խօսելով Փարիզի փետրուարեան յեղափոխութեան մասին—բայց նրանց հակառակորդները ևս պարտուել են: Բիրտ ու կոպիտ բռնակալութեան ակընթարթային յաղթական ցնծութիւնը կատարուեց փետրուարեան երազանքների և խարուսիկ յոյսերի խորտակման գնով: Ֆրանսիական ազգը խոր անդունդով բաժանուեց երկու անհաշտ մասերի՝ ունեւորների ազգ և քանուորների ազգ: Այդ անդնդախոր վիճը չպէտք է առիթ տայ Ֆրանսիական դեմոկրատներին կարծելու, որ պետական կազմի համար մղուելիք կռիւները անբովանդակ են և իլլիւզիօնական: Այն կոլլեզիօնները (բաղխում, ընդհարում), որոնք առաջանում են բուրժուական հասարակութեան ծոցից, ըէալ յարաբերութիւններից, չպէտք է առանց այլ և այլութեան դէն ձգել, անուշադիր լծողնել, այլ կոտուելով լուծել նրանց: Ամենալաւ պետական կազմը համարուած է այն, որի մէջ հասարակական հակառակութիւնները ոչ թէ ջնջոււմ, ոչ թէ զօրով, արուեստապէս կաշկանդոււմ են, այլ ընդհակառակը ազատ կոտուվ ու մաքառումներով յանգում են իրանց ընական լուծման:

Մարքսը ունենալով պրոլետարական դասակարգային իդէօլոգիա և միշտ այդ տեսակէտից վերաբերուելով դէպի հասարակական երեւոյթներն ու քաղաքական խնդիրները, սովորութիւն ունէր բիրտբերական շահերի տեսակէտից նաև ցոյց տալու, թէ որ աստիճան վտանգաւոր ու կործանիչ է բոլոր պրոգրեսիստ տարրերի համար ֆէօդալիզմի-աբսօլիւտիզմի ըէակցիան: Այդ էր պատճառը, որ Մարքսը ոչ միայն իր փաստական հեղինակութեամբ տոն էր տալիս ժամանակակից կոմունիստական-պրոլետարական շարժման, այլ և բիրտբերական դեմոկրատիան—յեղափոխական բուրժուազիայի արմատական իդէօլոգները—դասեր էին վերցնում նրա քաղաքական յօդուածներից:

Մարքսի օրգանը քննադատուած է Հանգեմանի միջխտրութեան ըէակցիօնէր ձգտումները յօգուտ արսողիւտիզմի: Նա կոչ է ուղղում Բերլինում գումարուած Ժողովի խորհրդակցութիւններին մասնակցող ձախակողմեան դեմոկրատների հաս-

ցէին՝ չխաբուել փոքրիկ պարլամենտական-սահմանադրական կարկատանքից, տանուլ չտալ երբէք դեմոկրատական պոզիցիան։ Գերմանիայի պետական կազմի և նրա արտաքին քաղաքականութեան նկատմամբ «Neue Rheinische Zeitung»-ը ունեցել է հետեւեալ ծրագրային ամուր ու անխաղտ տեսակէտը. «Գերմանիայի անբաժան (այսինքն ոչ ֆեդերատիւ) հասարակապետութիւնը, կոիւ Ռուսաստանի դէմ, Լեհաստանի անկախութեան վերականգնումը»։

Մարքսը սուր քննադատել է Ֆրանկֆուրտի ձախակողմեան բանակի, ֆեդերատիւ հասարակապետութեան գաղափարն ու ձգտումները Գերմանիայի նկատմամբ։

«Գերմանիայում—ասում է Մարքսը—ցննորալիզացիայի (կենտրոնացման) կոիւր ֆեդերատիւ կազմի հետ, համարուած է մի կոիւ նորագոյն կոլտուրայի և ֆէօդալիզմի մէջ։ Նոյն իսկ բիւրգերական տեսակէտից նայելով խնդրին, Գերմանիայի սերտ ու անհակասական միութիւնը առաջին պայմանն է, որ պէտքի հնարաւոր լինի մինչ այժմ եղած թշուառութիւնից ազատուել և ազգային հարստութիւն ձեռք բերել։ Եւ վերջապէս ի՞նչպէս կարելի է նորագոյն սոցիալական խնդիրները լուծել 39 անդամահաստուած մանր-մուկ պետութիւնների մէջ»։²⁴⁾

Այս տողերից պարզ երևում է, որ Մարքսը բոլորովին հակառակ է եղել Գերմանիայի քաղաքական ֆեդերատիւ կազմին՝ և իրաւ ոչ միայն պրոլետարական, այլ և բիւրգերական տեսակէտից՝ բուրժուազիայի տնտեսական-քաղաքական շահերի տեսակէտից ժամանակակից Գերմանիայում։

Մարքսի օրգանը խիստ մերկացնող ոճով քննադատում է Գերմանիայի արտաքին դարաւոր տխրահոշակ քաղաքականութիւնը, Նա՝ պրուս-գերմանական բէակցիան, եղել է բոլոր յեղափոխական շարժումների մէջ, ազգերի ազատագրական գործում ամինասանամօթ ու նախատալից դերակատարը՝ սկսած ամերիկական անկախութեան կռուից և Ֆրանսիական յեղափոխութեան օրերից մինչև իտալական եւ լեհական խրոխտ ապստամբութեան անողորմ ճնշումները։ Այժմ, երբ իրենք՝ գերմանացիք, թոթափում են սեփական ծանր լուծը, պէտք է փոխեն նաև իրանց արտաքին քաղաքականութեան ընթացքը դէպի այն ժողովուրդները, որոնց շատերի ճնշման ու շղթայակապ դարձած վիճակի պատճառներից մէկը հէնց ինքը Գերմանիան է։

²⁴⁾ Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II եր-
107—108.

«Neue Rheinische Zeitung»-ը պահանջում է վճարար յեղափոխական կոիւ մղել Ռուսաստանի դէմ: Միայն վերջինիս դէմ մղած կոիւն է, որ կարող է մի կոիւ համարուել յեղափոխական Գերմանիայի կողմից. մի կուլ, որով Գերմանիան կը մտնէ իրան իր անցեալի մեղքերից. իր զաւակները զոհելու գնով, նա կը դառնայ քաղաքակրթութեան պաշտպանն ու նախանձախնդիրը, ստրկացած ժողովրդի ազատարարը: Մարքսի օրգանը անդադար յիշեցնում է, որ ռուսական ընակասութեան գոյութեամբ միշտ պիտի վտանգուած լինի յեղափոխական շարժումը Գերմանիայում:

Ռուսաստանի դէմ մղուելիք յաջող կռուի հետ անմիջապէս կապուած է Լեհաստանի անկախութիւնը. իսկ վերջինս, անպայման, մի անհրաժեշտութիւն է կազմում եւրոպական յեղափոխութեան շահերի տեսակէտից, որի յաղթական ընթացքը պայմանաւորուած է ռուսական կոլոսի անդարձ խորտակումով: Հէնց այդ է պատճառը, որ 30—40-ական թուականներին լեհական հարցը այնքան մեծ ժողովրդականութիւն ու համակրանք էր վայելում արեւմտեան եւրոպայում: Ժամանակակից դեմոկրատիան խիստ մեծ կենսական շահ ունէր լեհական հարցի նպաստաւոր լուծումից, մանաւանդ գերմանական դեմոկրատիան: «Այնքան,—ասում է Մարքսը—որքան մենք (այսինքն Գերմանիան) լեհերին ճշշենք, որքան մենք Լեհաստանի մի մասը մեր ձեռքը գրաւենք, այնքան էլ պէտք է մենք կախման ու շղթայուած վիճակի մէջ ֆրանց Ռուսաստանից և ռուսական քաղաքականութիւնից, և այնքան էլ, հետեաբար, չենք կարող կործանել մեր երկրի նահապետական-ֆէօդալական արքայութիւնը»: 35) Մարքսը կծու հարուածներով պարսաւում է պրուսական իշնկեր-թագաւորութեան աւարառու և յափշտակիչ քաղաքականութիւնը Լեհաստանի վերաբերմամբ: Ըստ Մարքսի Լեհաստանի աւերիչ յափշտակութիւնը՝ Ռուսաստանի, Աւստրիայի և Պրուսիայի միջոցով, կազմել է եւրոպական «Մուրը դաշնակցութեան» («Die heilige Allianz») իսկական շաղկապող օղակը:

Այդպէս, Մարքսի օրգանը ազգերի անկախութեան և քաղաքական ինքնուրոյնութեան պարօլ էր արձակում 40-ական թուականների վերջերին: Նա յայտարարում էր՝ Լեհաստանը լեհերի համար, Իտալիան՝ իտալացիների համար, Ունգարիան՝ ունգարացիների համար: Նա խիստ պախարակում էր ժամանակակից պանսլաւօնական շարժումը, (որից Մարքսը ազատ էր համարում լեհական ազատագրական շարժումը) որը, կամ դատարկ ցնորք ու բանդագուշանք էր կամ թէ չէ ռուսա-

³⁵⁾ Ibid, էր. 110.

կան աւերիչ կնուտը: Մասնաւորապէս Էնգելսը սուր իրօնա-
յով քննադատել է Թերթի էջերում պանսլաւիզմը և դրան փա-
ռաբանող այն մանիֆեստը, որ ուղղել է մեծ անարխիստը՝ Բակու-
նին, 1848 թ. Պրագում գումարուած սլաւոնների կոնգրեսին: Պանսլաւոնական շարժման կուլ են գնացել այնպիսի ժողո-
վուրդներ, որոնք կամ ըստ իրանց պատմական դիրքի անհրա-
ժեշտօրէն հակայեղափոխական տարրեր են՝ ինչպէս օրինակ
հարաւային սլաւոններն են, կամ թէ, ինչպէս ուսման են, դեռ
շատ հեռու են յեղափոխութիւնից և այդ պատճառով գոնէ դեռ
առայժմ առաջնապէս հակայեղափոխական տարրեր են:

Այստեղ յիշածներս կազմում են մի փոքրիկ նմուշ այն
հրապարակախօսական, յեղափոխական, քաղաքական կո-
լոսալ գործնէութիւնից, որ ունեցել է Մարքսի օրգանը՝ ասել
է ինքը Մարքսը, ինչպէս և Էնգելսը, մի տարուայ ընթացքում:
Ժամանակակից բոլոր ազգային թէ միջազգային հրատապ
հարցերը՝ իրանց պատմական-քաղաքական լուսաբանութեամբ
և քննադատական անալիզներով տեղ են բռնել «Neue Rhein-
sche Zeitung» օրգանում: Դեռ այսօր էլ այդ Թերթի պարզա-
բանած ծանրակշիռ քաղաքական խնդիրներն ու արժարժած
գաղափարները պահպանել են իրանց թարմութիւնը՝ պատմա-
կան արժէքով և ուսուցող նշանակութիւնը՝ ամեն մի ժուր-
նալիստի ու հրապարակախօսի համար:

Մարքսի օրգանի 300 համարներում ամփոփուած հա-
տուկտոր փշրանքները ժամանակակից յեղափոխական շարժ-
ման և քաղաքական դրութեան վերաբերեալ՝ անհամեմատ շատ
բան են ասում մեզ, քան բիւրգերական պատմաբանների այն
ժամանակուայ վերաբերեալ գրած հաստատիոր գրքերը: Ինչո՞ւ:
Որովհետեւ ոչ ոք չէ կարողացել այնպիսի նրբութեամբ ըմբռ-
նել իրերի եւ երեւոյթների, շարժումների եւ հարցերի պատ-
մական արժէքն ու քաղաքական իմաստը, և այդ բոլորին
կենդանի արտայայտութիւն տուել խորին հմտութեամբ,—ինչ-
պէս Մարքսն է կարողացել ու արել:

Մարքսը ունեցել է հանճարեղ հրապարակախօսութեան
բոլոր գերազանց կողմերը:

Թէ ինչ քաղաքական նախատեսումներ են ունցել Մարքսն
ու Էնգելսը այդ յեղափոխական շրջանում, որոնց ապագայ
իրականացումը չէ արդարացրել իրերի պատմական զարգաց-
ման պրոցեսը, դրանց մասին մենք կը խօսենք շատ յետոյ, երբ
գործ կ'ունենանք մարքսիզմի կրիտիկոսների հետ:

Բ. Դելսանեան

(Կը շարունակուի)